«Հաստատված է՝»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քարեագիտության ամբիոնի 30.08.2019թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1
ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Դատական հետքաբանություն
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Մագիստրատուրա, առկա ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Մագիստրոս
ԱՄԲԻՈՆ		Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն E-mail: OHGKRIM@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Բ. Ալեքսանյան E-mail: benik1962@mail.ru, հեռ 091-35-83-13
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		2-րդ կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		մագիստրոս

ԿՐԵԴԻՏՆԵՐ		3 (երեք)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱԽԱՏԱՆՔՆԵՐ		«Դատական հետքաբանություն» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 26 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար, 2 ժամ գործնական, 58 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է քննությունով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական դատավարություն», «Կրիմինալիստիկա», «Դատական փորձաքննություններ» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«Դատական հետքաբանություն» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են հետքաբանության առարկան, խնդիրները, հետքերի առաջացման մեխանիզմն ու դասակարգումը, հետքաբանական հետազոտման մեթոդիկան, մարդու ատամների, շրթունքների և եղունգների հետքերի կրիմինալիստիկական նշանակությունը, դրանց նույնացման հատկանիշները, ջարդող գործիքների և դրանց հետքերի նախնական հետազոտման առանձնահատկությունները, մասերի միջոցով ամբողջի պարզման հնարավորությունները, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների քննության ընթացքում հետքերի հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունների, սա-

		ոը զենքի կիրառման հետքերի բնութագրերը, կրիմինալիստիկական հոտաբանության հնարավորությունները, տրանսպորտային միջոցների հետքերի հետազոտման առանձնահատկությունները:
ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել համապարփակ տեսական գիտելիքներ և ձևավորել կարողություններ դատական հետքաբանության հասկացության, առարկայի, համակարգի, խնդիրների, հետքաբանական տարբեր օբյեկտների առաջացման մեխանիզմի ու դասակարգման, բնութագրական հատկանիշների, դրանց նախնական հետազոտման շրջանակներում տարվող աշխատանքների, հետքաբանական հետազոտման մեթոդիկայի, քննության ընթացքում դրանց օգնությամբ պարզման ենթակա հարցերի հնարավոր շրջանակի վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ 1) ներկայացնել դատական հետքաբանության հասկացությունը, խնդիրները և համակարգը, 2) ուսումնասիրել հետքերի առաջացման մեխանիզմի ու դասակարգման, հետքաբանական հետազոտման մեթոդիկան, 3) ներկայացնել մարդու ատամների, շրթունքների և եղունգների հետքերի կրիմինալիստիկական նշանակության, դրանց նույնացման հատկանիշները, 4) պարզաբանել ջարդող գործիքների և դրանց հետքերի նախնական հետազոտման հնարավորությունները, 5) ներկայացնել մասերի միջոցով ամբողջի պարզման հնարավորությունները, 6) ուսումնասիրել թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների քննության ընթացքում հետքերի հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները, 7) վերլուծելել սառը զենքի կիրառման հետքերի առանձնահատկությունները, 8) պարզաբանել կրիմինալիստիկական հոտաբանության հնարավորությունները 9) ներկայացնել տրանսպորտային միջոցների հետքերի հետազոտման առանձնահատկությունները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		ա) վերլուծել հետքաբանության տեսական հիմնախնդիրները, բ) քննարկումներ և բանավեճեր ծավալել հետքաբանական օբյեկտների ամրագրման, փաթեթավորման և վերցնելու միջոցների ու մեթոդների շուրջ, գ) տարբերել փորձագիտական հետազոտման արդյունքում արվող հետևությունները, դ) գնահատել հետքաբանական օբյեկտների վրա առկա հատկանիշները՝ ըստ նշանակության, ե) վերլուծել հետքերի փորձագիտական հետազոտման գործընթացը, զ) բնութագրել հետքաբանական օբյեկտերի հետազոտման համար անհրաժեշտ փորձարարական նմուշներ ստանալու պայմանները, է) գնահատել փորձագիտական հետազոտման արդյունքները:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք

		2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս. (3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) – Երևանի պետ. Համալս. – Եր.: Երևանի համալս. հրատ., 2004 – 416 էջ 3. Կրիմինալիստիկա: Բուհական դասագիրք /Լևոն Օհանյան. – 2-րդ հրատ.՝ փոփոխ. և լրաց. – ԵՊՀ հրատ., 2010. 512 էջ 4. Օհանյան Լևոն. Կրիմինալիստիկա: - Երևանի պետ. Համալս. – Եր.: Տիգրան Մեծ հրատ., 2004 – 504 էջ 5. Կրիմինալիստիկա: ՈՒս. Ձեռնարկ /Ա.Հ. Բախշինյան, Բ.Զ. Ալեքսանյան, Ս.Ա. Մարգարյան. – Եր.: Հեղինակային հրա-տարակություն, 2003. – 228 էջ 6. Винберг А.И. , Малаховская Н.Т. Судебная экспертология. В. , 1979. 7. Словарь основных терминов судебных экспертиз. М. ВНИИСЭ, 1980. 8. Орлов Ю.К. Производство экспертизы в уголовном процессе. М.: ВЮЗИ, 1982. 9. Белкин Р.С. Криминалистика: проблемы, тенденции, преспективы. От теории к практике. М.: ЮЛ, 1988. 10. Белкин Р.С. Криминалистика. Краткая энциклопедия. М.: РЭ, 1989. 2001. – 288с
Լրացուցիչ		1. Лифшиц Е.М., Михайлов В.А. Назначение и производство экспертизы. В.: ВСШ МВД РФ 1977. 2. Белкин Р.С. Криминалистика. Краткая энциклопедия. М.: РЭ, 1989. 3. Орлов Ю.К. Заключение эксперта и его оценка / по уголовным делам /. М.: Юрист, 1995. 4. Криминалистические экспертизы, выполняемие в органах внутренних дел. Библиотека следователя. М.: ЭКЦ МВД РФ, 1992. 5. Назначение и производство судебных экспертиз. М.: ЮЛ, 1988. 6. Справочник следователя. Практическая криманилистика: подготовка и назначение судебных экспертиз. Вып.3. М., Российское право, 1993. 7. Особенности иследования некоторых объектов традиционной криминалистической экспертизы /Снетков В.А./ М.: ЭКЦ МВД РФ, 1993 8. Криминалистическая экспертиза: возникновение, становление и тенденции развития. М.: ЮИ МВД РФ, 1994. 9. Рекомендации по назначению судебных экспертиз. С.: МВД РФ, 1995. 10. Росинская Е. Р. Судебная экспертиза в граՁданском, адмнистративном и уголовном процессе. М.: НОРМА. 2005

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ		Ընթացիկ ստուգման ձևը՝ միջանկյալ 1, միջանկյալ 2, ամփոփիչ քննություն		
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով	
		18-20	գերազանց	Միջանկյալ գնահատման միավոր
		13-17	լավ	
		8-12	բավարար	Հարց 1 / Հարց 2
		0-7	անբավարար	2 միավոր / 2 միավոր
		0	չներկայացած	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝		

		ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
այլ տեղեկություններ		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
Ներկայություն		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Հետքաբանության ընդհանուր դրույթները** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հետքաբանության առարկան և խնդիրները: 2. Հետքերի առաջացման մեխանիզմը և դասակարգումը: 3. Հետքերի հայտնաբերման, զննման, ֆիքսման և վերցնելու ընդհանուր դրույթները: 4. Հետքաբանական նույնացման հիմունքները: 5. Հետքաբանական փորձաքննության մեթոդիկայի դրույթները:	Հարցեր 1-5 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-5 ինքնուրույն աշխատանք՝ իրականացնել ներկայացված հարցերի ուսումնասիրություն առաջարկվող գրականության միջոցով:

Թեմա 2 **Մարդու ատամների, շրթունքների և եղունգների հետքերը** **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Մարդու ատամների հետքերի կրիմինալիստիկական նշանակությունը: 2. Մարդու ատամների նույնացման հատկանիշները: 3. Մարդու ատամների հետքերի տեսակները և դրանց ձևավորման մեխանիզմը: 4. Ատամների հետքերը ֆիքսելու և վերցնելու առանձնահատկությունները: 5. Ատամների հետքերի հետազոտման մեթոդիկան:	Հարցեր 1-5 դասախոսության ընթացքում բացատրվում են թեմայում ընդգրկված հարցերը: Հարցեր 1-5 ինքնուրույն աշխատանք՝ իրականացնել ներկայացված հարցերի մանրակրկիտ ուսումնասիրություն առաջարկվող գրականության միջոցով:

Թեմա 3 **Ջարդող գործիքների և դրանց հետքերի նախնական հետազոտումը** **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ջարդող գործիքների հետքերը և դրանց կրիմինալիստիկական նշանակությունը 2. Ջարդող գործիքների հետքերի տեսակները և դրանց ձևավորման մեխանիզմը 3. Ջարդող գործիքների հետքերի զննումը, ֆիքսումը և վերցնելը 4. Ջարդող գործիքների նույնացման փորձաքննության մեթոդիկան դրանց հետքերի միջոցով	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն, որն ուղեկցվում է տարբեր տեխնիկական միջոցների ցուցադրումով: Հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք՝ իրականացնել ներկայացված հարցերի ուսումնասիրություն առաջարկվող գրականության միջոցով:

Թեմա 4 **Մասերի միջոցով ամբողջի պարզումը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Փորձագիտական հետազոտումների գործընթացը 2. Փորձագետի եզրակացության կառուցվածքը 3. Փորձագետի եզրակացությունը որպես ապացույցի աղբյուր և դրա գնահատումը	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. Սովորողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին: Հարցեր 1-3 անցկացվում է սեմինար պարապմունք:

Թեմա 5 **Հետքերի հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների քննության ընթացքում (հաբիտոսկոպիա)** **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քննության ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքները; 2. Տիպային քննչական իրադրությունները և ընդհանուր վարկածները: 3. Առաջնահերթ քննչական գործողությունների առանձնահատկությունները:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն առանձնակի ուշադրություն դարձնելով սովորողների կողմից բարձրացված հարցերին: Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք՝ ուսումնասիրել առաջարկված գրականությունը:

Թեմա 6 **Սառը զենքի կիրառման հետքերը** **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Սառը զենքի կրման, օգտագործման և գործադրման հետքերը: 2. Սառը զենքի և դրա կիրառման հետքերի զննումը: 3. Սառը զենքի կրիմինալիստիկական փորձաքննությունը: 4. Սառը զենքի գործադրման վերաբերյալ հետախուզական և ապացուցողական տեղեկատվության օգտագործումը հանցագործությունների բացահայտման և քննության ընթացքում:	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն Հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը:

Թեմա 7 **Կրիմինալիստիկական հոտաբանություն** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հոտ արձակող հետքերի հասկացությունը: 2. Դեպքի վայրում տարվող աշխատանքը հոտ արձակող հետքերի հետ և համեմատական հետազոտման համար նմուշների ընտրություն կատարելը: 3. Դատահոտաբանական փորձաքննությունը:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 ինքնուրույն աշխատանք՝ սովորողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը: Հարց 2 անցկացվում է գործնական պարապմունք՝ սովորողները ծանոթանում են հետքաբանական օբյեկտների հայտնաբերման, ֆիքսման և վերցնելու հիմնական կանոններին, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 8 **Տրանսպորտային միջոցների հետքերի հետազոտումը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Տրանսպորտային միջոցների հետքերը և դրանց առաջացման մեխանիզմը: 2. Տրանսպորտային միջոցների նույնացման հատկանիշները, որոնք արտացոլվում են հետքերում: 3. Տրանսպորտային միջոցների հետքերի ֆիքսումը և զննումը:	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 3-4 ինքնուրույն աշխատանք՝ սովորողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը:

4. Տրանսպորտային միջոցների խմբային պատկանելիության պարզումը հետքերի միջոցով:	Հարցեր 3-4 անցկացվում է սեմինար պարապմունք: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

«Դատական հետքաբանություն» առարկայից մագիստրատուրայի
2-րդ կուրսում առաջին ընթացիկ (միջանկյալ) քննության

1. Դատական հետքաբանության առարկան և խնդիրները
2. Հետքերի առաջացման մեխանիզմը և դասակարգումը
3. Հետքերի հայտնաբերման, զննման, ֆիքսման և վերցնելու ընդհանուր դրույթները
4. Մարդու ատամների հետքերի կրիմինալիստիկական նշանակությունը
5. Մարդու ատամների նույնացման հատկանիշները
6. Մարդու ատամների հետքերի տեսակները և դրանց ձևավորման մեխանիզմը
7. Ատամների հետքերը ֆիքսելու և վերցնելու առանձնահատկությունները
8. Ատամների հետքերի հետազոտման մեթոդիկան
9. Ջարդող գործիքների հետքերը և դրանց կրիմինալիստիկական նշանակությունը
10. Ջարդող գործիքների հետքերի տեսակները և դրանց ձևավորման մեխանիզմը
11. Ջարդող գործիքների հետքերի զննումը, ֆիքսումը և վերցնելը
12. Ջարդող գործիքների նույնացման փորձաքննության մեթոդիկան դրանց հետքերի միջոցով
13. Մասերի միջոցով ամբողջի պարզման կրիմինալիստիկական նշանակությունը և էությունը
14. Մասերի միջոցով ամբողջի պարզման փորձաքննության մեթոդիկան

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

«Դատական հետքաբանություն» առարկայից մագիստրատուրայի
առկա ուսուցման 2-րդ կուրսում երկրորդ ընթացիկ (միջանկյալ) քննության

1. Սառը զենքի կրման, օգտագործման և գործադրման հետքերը և դրանց զննումը
2. Սառը զենքի կրիմինալիստիկական փորձաքննությունը
3. Սառը զենքի գործադրման վերաբերյալ հետախուզական և ապացուցողական տեղեկատվության օգտագործումը հանցագործությունների բացահայտման և քննության ընթացքում
4. Հոտ արձակող հետքերի հասկացությունը
5. Դեպքի վայրում տարվող աշխատանքը հոտ արձակող հետքերի հետ և համեմատական հետազոտման համար նմուշների ընտրություն կատարելը
6. Դատահոտաբանական փորձաքննությունը
7. Տրանսպորտային միջոցների հետքերը և դրանց առաջացման մեխանիզմը
8. Հետքերում արտացոլվող տրանսպորտային միջոցների նույնացման հատկանիշները
9. Տրանսպորտային միջոցների հետքերի ֆիքսումը և զննումը
10. Թմրամիջոցների և դրանց հետքերը կրող առարկաների հայտնաբերումը զննության և խուզարկության ժամանակ
11. Թմրամիջոցների և դրանց հետքերը կրող առարկաների ֆիքսման, փաթեթավորման և վերցնելու առանձնահատկությունները
12. Թմրամիջոցների և դրանց հետքերը կրող առարկաների փորձագիտական հետազոտումը

ՀԱՐՑԱՇԱՐ

«Դատական հետքաբանություն» առարկայի ամփոփիչ քննության

1. Դատական հետքաբանության առարկան և խնդիրները
2. Հետքերի առաջացման մեխանիզմը և դասակարգումը
3. Հետքերի հայտնաբերման, զննման, ֆիքսման և վերցնելու ընդհանուր դրույթները
4. Մարդու ատամների հետքերի կրիմինալիստիկական նշանակությունը
5. Մարդու ատամների նույնացման հատկանիշները
6. Մարդու ատամների հետքերի տեսակները և դրանց ձևավորման մեխանիզմը
7. Ատամների հետքերը ֆիքսելու և վերցնելու առանձնահատկությունները
8. Ատամների հետքերի հետազոտման մեթոդիկան
9. Ջարդող գործիքների հետքերը և դրանց կրիմինալիստիկական նշանակությունը
10. Ջարդող գործիքների հետքերի տեսակները և դրանց ձևավորման մեխանիզմը
11. Ջարդող գործիքների հետքերի զննումը, ֆիքսումը և վերցնելը
12. Ջարդող գործիքների նույնացման փորձաքննության մեթոդիկան դրանց հետքերի միջոցով
13. Մասերի միջոցով ամբողջի պարզման կրիմինալիստիկական նշանակությունը և էությունը
14. Մասերի միջոցով ամբողջի պարզման փորձաքննության մեթոդիկան
15. Սառը զենքի կրման, օգտագործման և գործադրման հետքերը և դրանց զննումը
16. Սառը զենքի կրիմինալիստիկական փորձաքննությունը
17. Սառը զենքի գործադրման վերաբերյալ հետախուզական և ապացուցողական տեղեկատվության օգտագործումը հանցագործությունների բացահայտման և քննության ընթացքում
18. Հոտ արձակող հետքերի հասկացությունը
19. Դեպքի վայրում տարվող աշխատանքը հոտ արձակող հետքերի հետ և համեմատական հետազոտման համար նմուշների ընտրություն կատարելը
20. Դատահոտաբանական փորձաքննությունը
21. Տրանսպորտային միջոցների հետքերը և դրանց առաջացման մեխանիզմը
22. Հետքերում արտացոլվող տրանսպորտային միջոցների նույնացման հատկանիշները
23. Տրանսպորտային միջոցների հետքերի ֆիքսումը և զննումը
24. Զննության և խուզարկության ժամանակ թմրամիջոցների և դրանց հետքերը կրող առարկաների հայտնաբերումը
25. Թմրամիջոցների և դրանց հետքերը կրող առարկաների ֆիքսման, փաթեթավորման և վերցնելու առանձնահատկությունները
26. Թմրամիջոցների և դրանց հետքերը կրող առարկաների փորձագիտական հետազոտումը